

ՄՏԱՀՈԳԻԶ ԿԱՑՈՒԹԻՒՆ ԱՐԾՈՒԱՇԷՆ

Չորեքշաբթի (Օգոստոս 5) առտու Երեւանէն մեր առած լուրերու համաձայն կացութիւնը շատ ծանրակշիռ էր Արծուաշէն և Կրասնոսելսկ (առաջինը հայկ. գիւղ Աղբրեջանի տարածին վրայ) : Այս գիւղերու վրայ գնդակոծումները չեն դադարիր եւ 24 ժամէ բոլորովին շրջափակուած են եւ Արծուաշէնի Հայաստանի հետ կապը խզուած : Այս իսկ պատճառով, ստոյգ տեղեկութիւններ չկան, բայց ծանոթ է որ նիւթական մեծ վնասներէ դատ, վիրաւորներ ալ կան :

Ինչ կը վերաբերի Մարտակերտի, քաղաքը դեռ Աղբրիներու ձեռն էր Օգոստոս 5-ին, գիրքերու կռիւները կը շարունակուէին :

**

Արտաշատի մէջ ներքին գործերու բաժնի աշխատակիցներուն վարպետ գործողութիւններուն շնորհիւ յայտնարեւուած եւ գրաւուած էին մեծ քանակութեամբ գողցուած զէնք, զինամթերք եւ անոնց ապօրինի վաճառքէն գոյացած քանի մը միլիոն ուրլի : Ներքին Գործերու Նախարարին հրահանգով գործողութիւնը կատարող խումբը պարզեւատրուած է, 50 հազար ուրլիով. իսկ բաժնի պետը աստիճանի բարձրացում ունեցած է : Անոնք իրենց պարզեւէն բաժին հանած են նաեւ Ռակեպար գիւղի կռիւներուն նահատակուած երկու ընկերներու լնատանիքներուն :

ԵՐԲ

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԵՐՆ ԱԼ ԿԸ ՌՄԲԱԿՈՒԾՈՒԻՆ...

Չէր բաւեր որ կրակ բացուէր մանուկներ փոխադրող հանրակառքի մը վրայ, սպաննելով երկու մանուկներ, որոնց միակ յանցանքն էր Պոսնիա ծնած ըլլալ, հարկ

(Շար.ը Դ. Էջ)